ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ, 2024

Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 3

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5

Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2024թ.-ի Ապրիլի 30-ի դրությամբ կազմել են 205.13 մլրդ դրամ՝ 2023թ.-ի Ապրիլի նկատմամբ աճելով 13.3%-ով, իսկ 2024թ.-ի Մարտի նկատմամբ՝ 0.3%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2024թ.-ի Ապրիլի 30-ի դրությամբ կազմել է 158.78 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Ապրիլի նկատմամբ աճելով 17.0%-ով, իսկ 2024թ. Մարտի նկատմամբ՝ 1.5% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2024թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ կազմել է 73.47 մլրդ դրամ՝ 2023թ.-ի Ապրիլի նկատմամբ աճելով 14.9%-ով, իսկ 2024թ.-ի Մարտի նկատմամբ աճելով 0.2%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2023-2024թթ. Ապրիլի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2024թ.-ի Ապրիլ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 11. 70 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 29.9%-ով, իսկ 2024թ.-ի Մարտի նկատմամբ նվազել է 7.4%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2023 և 2024 թթ.-երի Հունվար-Ապրիլ ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2024թ.-ի Ապրիլ ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 60,829 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ նվազել է 8.6%-ով, իսկ 2023թ.-ի Ապրիլի նկատմամբ աճել է 10.6%-ով (Գծ. 3):

- 2024թ.-ի Ապրիլ ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 201,512 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2023թ.-ի Ապրիլի նկատմամբ աճել է 23.7%-ով, իսկ 2024թ. -ի Մարտի նկատմամբ նվազել է 0.2%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024թ.-ի Ապրիլին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 192 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 788 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2023թ.-ի Ապրիլին կազմել են համապատասխանաբար՝ 164 և 834-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2023 և 2024 թթ.-երի Հունվար-Ապրիլ ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2024թ.-ի Ապրիլի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 149 մասնաճյուղ, որը, համեմատած 2023թ.-ի Ապրիլի հետ, նվազել է 9-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2024թ.-ի Ապրիլի դրությամբ ունեցել են 432 վարկային մասնագետ, որը, համեմատած 2023թ.-ի Ապրիլի հետ, նվազել է 27-ով:
- 2024թ.-ի Ապրիլին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 27.08 մլն դրամ, նախորդ ամսին՝ 29.31 մլն դրամ, իսկ 2023թ.-ի Ապրիլին այս ցուցանիշը կազմել է ևս 19.64 մլն դրամ (Գծ. 5):
- 2024թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 367.54 մլն դրամ, նախորդ ամսվա 363.09 մլն դրամի և 2023թ.-ի Ապրիլին 296.10 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2024թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ կազմել է 1,769 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,466 մլն դրամ և 2023թ.-ի Ապրիլին՝ 1,644 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը աճել է 7.6%-ով, իսկ 2024թ.-ի Մարտի նկատմամբ՝ 20.7%-ով: 2024թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.11%-ը, 2023թ.-ի Ապրիլին ևս կազմել է 1.21% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2024թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ կազմել է 4,353 մլն դրամ, նախորդ ամիս՝ 4,236 մլն դրամ և 2023 թ.-ի Ապրիլին՝ 3,523 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 23.6%-ով, իսկ 2024թ.-ի Մարտի նկատմամբ աճել է 2.8%: 2024թ.-ի Ապրիլի

վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 2.74%-ը, 2023թ.-ի Ապրիլին՝ 2.60% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2024թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 555 մլն դրամ, նախորդ ամիս՝ 540 մլն դրամ և 2023թ.-ի Ապրիլին՝377 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2024թ.-ի Ապրիլին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 2.8%-ով, իսկ 2023թ.-ի Ապրիլի նկատմամբ աճել է 47.3%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Ապրիլի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.35%-ը, նախորդ ամիս՝ 0.34% և 2023թ.-ի Ապրիլին 0.28% (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Ապրիլի 30-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2024թ.-ի Ապրիլի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 77.4%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Ապրիլին կազմել է 75.0% (Գծ. 7):

- Սույն թվականի Ապրիլի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 46.3%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 46%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Ապրիլին կազմել է 47.1% (Գծ. 7):
- 2024թ.-ի Ապրիլի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 35.8%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2023թ.-ի Ապրիլին կազմել է 35.3% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2024թ.-ի Ապրիլ ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.79, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 1.8 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Ապրիլի համար կազմել է 1.83:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
55 007
59 697
55 538
55 861
55 458
53 583
59 106
62 924
70 134
63 592
63 943
66 530
60 829
Apr-23
May-23
Jun-23
Jul-23
Aug-23
Sep-23
Oct-23
Nov-23
Dec-23
Jan-24
Feb-24
Mar-24
Apr-24


Ժամկետանց վարկերի դինամիկան 04/2023-04/2024
PAR 1-30 days
PAR more than 30 days
5 000 000
4 000 000
3 000 000
2 000 000
1 000 000
-
Apr-23
May-23
Jun-23
Jul-23
Aug-23
Sep-23
Oct-23
Nov-23
Dec-23
Jan-24
Feb-24
Mar-24
Apr-24